

միթէ յանցանք է ճշմարտութիւնը խոստովանել հրապարակաւ:

«Ազատ Եկեղեցի» եւ «Պայքար» թագուն զիտաւորութիւններ կը տեսնեն նաեւ իմ էջմիածին եւ Երեւան տարած աշխատանքներու մէջ. այս ինքն զրականութեան ջողին տակ կրօնական գործունէութիւն: Եթէ անոնք այնքան սրատես են, գաղտնի տեսնելու, ինչո՞ւ կը կուրանան յայտնին նշմարելու: Շարաթը 6 օր Մատենադարանին եւ ապա դրօքն փակելովք փոքրիկ խցիկանս մէջ պարապմունքներու անգիտակ, գրապահաստներու փոշիներու մէջ պրպտումներու անձանօթ, ահարեկեալ կը հետեւին իմ քայլերուս դէպի Երեւան: Եթէ անձնատուր էի բանասիրական աշխատանքներուս, բայց զիտակից էի միաժամանակ իմ հոգեւոր կոչմանս: Մխիթարութիւն տալ ժողովրդեան իւր հոգեւոր կարիքներու մէջ, այդ իմ սրտի ամենամեծ հաճոյքն էր, ե՛ւ աշնանային փոշեթաթախ ճանապարհներու ե՛ւ կարածմեռն ձմեռուան ձիւնալից սառցապատ դաշտերու վրայ: Անոնք քաջ ծանօթ են կիրակնօրեայ քարոզներուս, ուղղուած հայ կաթողիկէ ժողովրդեան: Իսկ եթէ այս առթիւ 1925/1926ին պատահեցան դէպքեր, երբ հայ ժողովրդենէն ալ ոմանք փափազեցան անդամակցիլ Երեւանի փոքրիկ Մատուռիս, այդ ոչ թէ գործն էր իմ «պրոպագանդիս», այլ պարզապէս ինքնակամ մղումը ժողովրդեան, որ կա՛մ ժամանակի քոսային դրութեան ճնշման տակ սրտի աւելի սիւփանք գտնել կը յուսար աղքատիկ, անփառունակ, բայց բարեկարգ հայ Ազօթատանս մէջ, եւ կա՛մ թերեւս նիւթական շահի ակնկալութեամբ կը յայտնէր իւր փափազը: Բայ էր Մատուռս, ազատ մուտ եւ ելք ունէր. ինչո՞ւ փակէի դռները եւ խորող պարսաւուէի. կամ որո՞ւն անձանօթ էին իմ նիւթական անձկութիւններս<sup>3</sup> եւ ինձմէ նիւթական շահ կ'ակնկալէր: Ի՞նչն էր հրապուրիչը. ի՞նչ նորաձեւ օտարուսում բան կը տեսնէր կամ կը լսէր այցելուն հոն: Կը յիշեմ միայն, որ մինչ Մատուռս խոնուած էր հաւատացողներով, հայկական մեծաշուք Եկեղեցիները թափուր էին ժողովրդե-

նէ: Այս մասին ո՛չ կալանաւորութենէս յառաջ եւ ոչ յետոյ դիտողութիւն եղած է ինձ կառավարութեան կողմանէ, որովհետեւ օրէնքի համաձայն էին քայլերս եւ անպարսաւ ընթացքս:

Բայց դարձանալի է «Ազատ Եկեղեցւոյ» (Երեւան) եւ «Պայքարի» (Բոստոն) նախանձախնդրութիւնը այս մասին: Առաջինը Մայր Աթոռի դարաւոր սիւներն հիմն ի վեր բրել կը ջանայ. եւ այս խղճի խայթ չէ իրեն. երկրորդը զիտէ Բապտիստներու եւ այլ բողոքական քարոզիչներու մոլեռանդ գործունէութիւնը չափոց մէջ, եւ ոչ մի երկիւղ չի զգար թէ կը տուժէ հայր թէ՛ իւր հաւատքը, թէ՛ աւանդութիւնները եւ թէ՛ ազգային Եկեղեցւոյ նկարագիրը: Երկուքն ալ կ'անտեսեն այն ահաւոր հոսանքը, որ ժողովուրդը դէպի անկրօնութիւն եւ անաստուածութիւն կը մղէ. եւ լուռ են: Բայց միաբերան ահազանդ կու տան ի տես Մխիթարեանի մը գործունէութեան: Մխիթարեանի՞ մը գործունէութիւնն է Հայոց Եկեղեցւոյն վտանգը: Բայց տեղւոյս չէ ծանրանալ այս կէտի շուրջը:

Հ. Ն. ԱԿՈՆՆԱՆ



**ՅՈՒՑԱԿ ՀՈՅՔԻՆ ԶԵՌԱԳՐԱՅ ԸՆԶՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆԻ**

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԵՒԲՏԵԱՆԻ Ի ՈՒՆԻԹՈՒՆ, ԿՆՍՍԱ**  
Եօթ կամ ութ տարուան ընթացքին մեծ գոհողութիւններով ի մի բերած հնազիտական հաւաքածոյիս մէջ կան շահեկան բազմաթիւ ձեռագիրներ, զորոնք անձնապէս ցուցակագրելով Հանդէսին միջոցաւ կը յանձնեմ բանասէրներու տրամադրութեան: Յուցակը պատրաստուած է Հ. Յ. Վ. Տաշեանի ուղղութեամբ: Ձեռագիրները դասաւորուած են Այբբենական կարգով:

Թիւ 1:  
Ա. Ի. Ն. Տ. Ա. Ր. Ա. Ն.  
ՌՃԺԵ = 1666:

Մեծութիւն՝ 2, 1—2 × 3, 1—2 ինճեղ:  
— Հաստութիւն՝ 2 ինճեղ: — Թերթք՝ 260<sup>1</sup>:

<sup>1</sup> Պակաս կամ ինկած թերթերը չհաշուելով:

<sup>3</sup> Այս շրջանին չունէի Արտասահմանէն որ եւ էջէ նպաստ. Պաւլոսի օրինակին հետեւելով, առանց դոք «Հասագործելու», ես ինքս կը հայթհայթէի օրպահարիկս պետական ծառայութեան մէջ: Ժողովուրդը չէր ծանրաբեռնուած ո եւ է տուրքով. Մատուռն ծախքերը կը հոգայի ինքս:

— էջք՝ 520: — Գիր՝ մանր բոլորգիր: — Գրութիւն՝ միասիւն: — Տողք՝ 14: — Նիւթ՝ մագաղաթ, փայլուն բայց դեղնած: — Կազմ՝ հին, կաշեպատ փայտեայ, կոնակի կաշին պոկուած է ցոյց տալով կազմին կմախքը առանց կազմը քայքայելու: Կազմին մէջ ազուցուած են մետաքս կերպասի նրբահիւս երկու կտորներ: — Հանգամանք՝ լաւ թէեւ տեղ տեղ թերթերը, գրչութիւնը, եւ գեղեցիկ լուսանցազարդք փոքր ինչ վնասուած: — Խորագիր, վերնագիր եւ սկզբնատառք՝ կարմիր եւ կապուիւ, բազմաթիւ են սիրուն թուչնագիրք: — Լուսանցազարդ՝ թուով 196 հատ մանրանկար եւ ճաշակաւոր: — Խորանագարդ՝ մէկ հատ խոնաւութենէ ազտուած: — Պատկեր՝ մէկ հատ Յովհաննէս Առաքեալ: Այս մանրանկարը բացարձակապէս իտալական արուեստի ազդեցութեան նմոյշ մը: — Յիշատակարանք՝ էջ 291, 297, 515, 520, իսկ գլխաւոր յիշատակարանը է 517—519: — Տեղեկութիւն՝ ձեռագիրս հաւաքմանս մէջ մտած է 1926ի ուրիշ մէկ հայերէն եւ մէկ պարսկերէն ձեռագրի հետ, գնուած Նիւ Եորք վաճառական Թ. է 175 տուրքի:

Մատեանս է Աւետարան:

Կը սկսի Ղուկասու աւետարանով որուն սկիզբի մասը ինկած կորսուած է, եւ գրքիս Ա. թերթին տակ նշանակուած է նոր գրչէ «4»: Այսպէս բուն գիրքը կը սկսի հետեւեալ հատուածով: — «... Եղիսարէթ: Եւ էին արգարք երկուքին առաջի Աստուծոյ, գնային յամենայն պատուիրանս եւ յիւրաւունս տեսնն անարատք»: Եւ կը վերջանայ էջ 291. «Աւետարան, ըստ Ղուկայ»: Էջ 292 կը սկսի «Յուցակը գլխաւորք սուրբ աւետարանին Յովհաննու» մինչեւ էջ 296ի ներքեւ: 298ին վրայ է գրքիս միակ մանրանկարը: Էջ 299 կը սկսի ճոխ խորանով եւ լուսանցազարդով Յովհաննու աւետարանը: Եւ կ'աւարտի էջ 515:

Էջ 516էն էջ 520 զանազան յիշատակարանք:  
Էջ 297. Կոչա ու նոր գրչէ նոսր գրով.  
«Այս սուրբ աւետարան է յիշատակ, տէր վարդանի օվ որ կարգայ մէկ բերան ողորմի սասցէ ամէն գարձեալ յիշեցէք որդի օվանէսն որդի»

վարդանն նորայ հասակ յօնէին տիրացու կարապետն մէկ բերան ողորմիս»:

Էջ 516. Նոր եւ կոչա գրչէ երեք տող գրուած ջնջուած յետոյ նոսր գրով.

«Յիշատակ է այս աւետարան մահտեսի սարգս ին եւ իւր որդոցն եւ թոռանցն ամէն Աստուած ողորմի իրան»:

Էջ 517. Գլխաւոր յիշատակարան էր գրչէն.

«Շնորհօք եւ ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Գրիստոսի աւարտեցաք զյառաջարկեալ զործ ծրագրութեանս այսմ աստուածբուղիս եւ վարդապիթիթ մատենիս որ կոչի աւետարան, ի յերկրիս արարադեան, ընդ հովանեաւ սուրբ եւ գերահռչակ աթոռոյս էջ միածնի, ի հայրապետութեան Տեառն Յակոբայ, սրբազան Կաթողիկոսի ամենայն հայոց, եւ ի թագաւորութեան փոքր Շա հպասի, եւ ի թուարբրութեան հայ կազեն տուժարի ՌՃԺԵ ամի»:

Էջ 518. Շարունակութիւն.  
«Ձեռամբ մեղսամակարդ եւ թըւ ուսուցեալ Մարկոս արեղայի: յիշատակ անջինջ եւ մշտնջենաւոր մահտեսի Սարգսին, արդ ազա չեմ դձեղ ո՞վ հարք իմ եւ եղարք յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմահտեսի Սարգիսն եւ Աստուած ողորմի սասցէք նմա, վասն զի յոյժ սիրով ես գրել զսա եւ պահել առ իւր իբրեւ զորդեակ իւր հարազատ ի կենդանութեան իւրում, եւ յետ մահուան իւրոյ յիշատակ բարի եւ յախտենական, վասն յորոյ կրկին ազաչեմ զձեզ որք հան»

Էջ 519. Շարունակութիւն.  
«Գիպիք ամա լի սրտով ողորմի սասցէք մահտեսի Սարգսին եւ որ առատն է ի տուրս բարեայ

մեզ եւ ձեզ ողորմեացի ի միւսան դամ զալստեանն իւրոյ ամէն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զճաղկող սորա զՅովսէփ<sup>2</sup> սրբաանուեղ կրօնաւորն որ բազում աշխատեցաւ ի վերայ սորա յիշեցէք եւ Աստուած ողոր մի ստացէք: Եւս առաւել յիշեցէք ի Քրիստոս եւ զիս զբանի վատնող զմանու ելս. որ կազմեցի զսա յիշատակ Սարգսին»:

Յիշատակարանիս այս վերջին մասին զիրը տարբեր կերեւի հաւանարար կազմող Մանուէլի իսկ զբնէն գրուած:

Էջ 520ին վրայ է վերջին յիշատակութիւնը նոր եւ կոշտ զբնէ մեծ մասամբ անընթեռնի եւ անիմաստ:

Թիւ 2:

Ա. Ի. Ե. Տ. Ա. Ր. Ա. Ն.

Ժ. 2—Ժ. 2 զար:

Մեծութիւն՝ 3, 1—4 × 4, 1—2: — Հաստութիւն՝ 1, 3—4 ինձեղ: — Թերթի՝ 274: — Էջի՝ 548: — Գիր՝ բոլորով: — Գրութիւն՝ երկսիւն: — Տողի՝ 19: — Նիւր՝ թուղթ: — Կազմ՝ Հին, կաշեպատ փայտ, ունի ճակտի պահպանակ, ծաղկանկար զործուած սրուն կէսը պոկուած կորսուած է: Կողքին վրայ ծակախրոններ ցոյց կու տան որ ժամանակին կողքը զարդարուած էր արծաթեայ զարդերով, որոնք հիմակ կը պահպան: Կողքին ներսի կողմը

<sup>2</sup> Վիեննական Միւսթ. մագր. Հայ. ձեռ., Թիւ 208ը որ է մագաղաթեայ Ծարակնոց մը զրեալ ի վան, կը յիշէ իրը ծագող «Յովսէփ Ծարակնոցի ծագկող» (Յուցակ, էջ 531): Չեռագրիս իրը զբնութեան ժամանակ նշանակուած է Ժ. 2. զար, որ իմ աւետարանիս զբնութեան ստեղծ է: Ասկէ զտո կ'ուզեմ ուշադրութեան յանձնել նոյն մագր. Թիւ 93 մագաղաթ աւետարանն այ որ գրուած է 1651ին. «Շու որ է Սպահան... ի թագաւորութեանն Պարսից փարս Եւստասիոս, որ թոն մեծ Եւստասիոս, ձեռամբ անարժան եւ մեղսածն զձողի Յովսէփ զպրի ի ինդրոյ են... յիշեցէք ի Քրիստոս զճաղկող սորին Մեծոսող փարսպոսեան, եւ զձեռնոցն յիշեցէք: Եւս եւ զեղբայրակիցն մեր այսմ արհեստի զԱստուածատուր քահանայն, Յովսէփն, Եւստասիոսն, զՄարկիոսն, զՍրբահասն են (Յուցակ, էջ 363):

Այս վկայութեան մէջ յիշուած «զեղբայրակիցն մեր այսմ արհեստի» որ կը յիշուի Մարկիոս, կ'ուզեմ նոյնացնել իմ աւետարանիս Մարկոս արեղային հետ: Իսկ Յովսէփն այ իմ աւետարանիս ծագկողին հետ: Կերեւայ որ Յովսէփ նախապէս գրեւ էր միայն՝ 1651ին ստեղծելը՝ բայց 1666ին արդէն իրը ծագկող կը ներկայանայ:

պատած է նրբահիւս մետաքս կերպասով: — Հանգամանք՝ թէ եւ որոշ չափով լաւ բայց թերթերը պակասած են եւ էջերը հոս ու հոն ազոտուած: Նկարներուն երկուքը պատուած հանուած, իսկ միւս երկուքը քիչ մը վնասուած կը մնան: — Խորագիրք, վերնագիրք եւ Սկզբնատառք՝ միայն կարմրիւ եւ պարզ եւ վերջիններս երբեմն թռչնագիր եւ երբեմն հիւսկագիր: — Լուսանցազարդք՝ միայն կարմրիւ ստուերնով, թէ եւ ճապուղի զբնէ զործ, թուով 184 հատ: — Պատկերք՝ էջ 246. Ղուկաս Աւետարանի: էջ 424. Յովհաննէս առաքեալ ոչ ճոխ եւ ոչ ալ յաջող: — Խորանք՝ էջ 247 եւ 425. Նոյնպէս ոչ շատ յաջող: — Յիշատակարանք՝ չկան: — Տեղեկութիւն՝ ձեռագիրս զանուած է Կ. Պոլիս 7 ուրիշ ձեռագրաց հետ 1922ին 80 թուղթ օտմ. ոսկւոյ մօրս ձեռքով:

Մատեանն է Աւետարան:

Կը սկսի աւետարանի սա հատուծով, սակէ առաջուան մասը ինկած կորսուած է

«... Պատասխանի եւ Յիսուս եւ սակցնոսս զնացէք պատմեցէք Յովհաննէս զոր լուսայք եւ տեսէք կոյրք տեսանեն» են:

Ասկէ առաջուան մասը կրող թերթերը ինկած են ինչպէս որ ըսի: Մարկոսի աւետարանը կը տեսէ մինչեւ էջ 127ի ստորտը: էջ 128. «Գլուխք Մարկոսի աւետարանի»: Այս ալ մինչեւ էջ 130 որուն կէսէն կը սկսի «Նախադրութիւն Մարկոսի Աւետարանին» որ սակայն ինկած թերթի մը պատճառով չաւարարիւ եւ կը պակսի հետեւեալ հատուածէն անդին՝

«Պատմէ եւ վան ընտրութեան աշակերտացն եւ նշանս...»

Մարկոսի աւետարանին Ա. մասն ալ կը պակսի թերթ մը, էջ 131 կը սկսի Մարկոսի աւետարանը հետեւեալ հատուածով: «... Նաղարեթէ Գալիլեացոց եւ մկրտեցաւ ի Յովհաննէ ի յորդանան»: Այս ալ կը հասնի էջ 239 Բ. սիւն կէսին:

Էջ 240. Կը սկսի «Գլուխք Ղուկաս աւետարանին» մինչեւ էջ 244ի կէսը, հոս կը սկսի նախադրութիւնը եւ կը տեսէ մինչեւ 245 էջի կէսը ու կը վերջանայ ասով՝

«Այլ թէ զՂուկաս կընն գրեցին զի սոյս նա հերկէ զգետին»

Կրկին անխոնջ վանն ասողին սոյն այս յերկատ է բանքս ամին»:

Էջ 247. Կը սկսի.

«Աւետարան ըստ Ղուկասու» մինչեւ էջ 420, 421. «Գլուխք ըստ Յովհաննէս աւետարանին»: էջ 422. ունի նախադրութիւնը, իսկ էջ 423 պարսպ է: էջ 424 կը սկսի «Աւետարան ըստ Յովհաննէս» մինչեւ էջ 546, 546—548 պարսպ:

Թիւ 3:

Ա. Ի. Ե. Տ. Ա. Ր. Ա. Ն.

Ժ. 6—Ժ. 2 զար:

Մեծութիւն՝ 5, 1—2 × 8: — Հաստութիւն՝ 2, 1—2 ինձեղ: — Թերթի՝ 286: — Էջի՝ 572: — Գիր՝ բոլորով: — Գրութիւն՝ երկսիւն: — Տողի՝ 21: — Նիւր՝ թուղթ հաստատուն եւ լաւ ողորկուած: — Կազմը՝ հին, կարմիր կաշեպատ հաստ խաւարար: Ներքին կողմերը զեղին նրբահիւս մետաքս: Կազմը ծակծկուած հաւանարար նախապէս զարդեր ունէր զիրքս: — Հանգամանք՝ կատարեալ: — Վերնագիրք ու Սկզբնատառք՝ հիւսկնկար, կարմրաւ, երբեմն գուռաւորուած: — Լուսանցազարդք՝ իսկ ձեռքի արդիւնք թէ եւ երկններանգ: — Պատկերք՝ Մարկոսինը եւ Մատթէոսինը կը պակսին պատուած հանուած ըլլալով, Ղուկասինը եւ Յովհաննէսինը կը մնան, ու բիւզանդական արուեստի արդեցութեամբ եղած եւ անյաջող արտադրութիւններ: Ղուկասի նկարը էջ 262 եւ Յովհաննէսի էջ 436: — Խորանք՝ էջ 263 եւ էջ 437 թէ եւ նուրբ եւ սակայն Արար կամ Պարսիկ արդեցութեան արդիւնք, կապիւլ, ոսկով, զեղնիւ եւ կարմրաւ ճաշակաւոր, կապոյտը գուռաթափ եղած է: — Գիտադրութիւն՝ ձեռանակներն որ թէ եւ ամբողջ է չունի յիշատակարան: — Ծանօթութիւն՝ ձեռագիրս զրկուած է Կ. Պոլսէն մօրս Տիկին Ազնիւ Քիւրտեանի է Կ. Պոլսէն մօրս Տիկին Ազնիւ Քիւրտեանի ձեռքով, ուրիշ 7 հատ հայ ձեռագրաց հետ եւ զնուած է օտար հնալուստէ մը 1922ին:

Մատեանն է Աւետարան:

Սկիզբէն 6 թերթ պարսպ: էջ 13 կը սկսի Յուցակ աւետարանի Մատթէոսի: Իսկ էջ 15 Մատթէոսի աւետարանը կը սկսի «Յովսէփ ծնաւ զյէթոնիս եւ...»: Նորադրոյն զբնէ էջերուն վրայ միայն Մատթէոսի

աւետարանի աւետարանիչին անունը գրուած է: Չեռագրիս ունի նաեւ էջերուն ստորին լուսանցքներուն վրայ համաձայնութիւնք: Երբեմն ալ կան զլիսաթիւեր Արարական թիւերով նշանակեալ նոր զբնէ: Մատթէոսի աւետարանը կ'աւարտի էջ 160, «Աւետարան ըստ Մատթէոսի: Փառք հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ»: էջ 161 կը սկսի Յուցակ Մարկոսի Աւետարանին: Յուցակը կը հասնի մինչեւ Խ. հոս ըստ երեւոյթի երկու թերթեր ինկած են որով կը պակսի նաեւ Մարկոսի աւետարանին Ա. մասն ալ ու Մարկոսի աւետարանը կը սկսի «Չայն եղեւ յերկնից եւ սակ, դու ես որդի իմ սիրելի: Ընդ քեզ հաճեցայ»:

Էջ 258. Կը վերջանայ Մարկոսի աւետարանը: «Աւետարան ըստ Մարկոսի Փառք ամենասուրբ երրորդութեանն Հաւր եւ որդւոյ եւ սուրբ հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ»: էջ 259. Յուցակ Ղուկաս աւետարանին: Կը վերջանայ էջ 261: էջ 262. նկար Ղուկաս աւետարանիչի: էջ 263 խորան, լուսանցազարդ եւ գունաւոր մեծ թռչնագիր Բ. զիր: Այս ալ կ'աւարտի էջ 433 Ա. սիւն «Աւետարան ըստ Ղուկաս»: Նոյն էջ Բ. սիւն ունի հետեւեալը բուն զբնէն «Ով հրաշափառ եւ երջանիկ երկնաւոր հրեղէն դատուն զարմանալի ծոցածին հաւր բան, հեղ յիս յանարժանս զգթութեանդ վտակս, եւ մի տար տէր դատ ընդ ծառայի քում որ յամի պարտաւորեցայ, այլ մախթանաւք մաւր քո, զմեղաց իմոց գլուխն խորտակեալ, եւ քաւեալ զիս զանցաւորս, եւ զանաւոր լուսայս եւ նուրբ խերեւեզս զոր մատուցանեմ ընդ այրոյն ընկալ Քրիստոս Աստուած իմ»: էջ 434՝ Յուցակ Յովհաննէս աւետարանին: էջ 435՝ վերջ: էջ 436՝ նկար Յովհաննէս աւետարանիչին, իսկ էջ 437 ճաշակաւոր աւետարանիչին, եւ թռչնագիր մեծ խորան լուսանցազարդ եւ թռչնագիր մեծ Ի., ու կը սկսի Աւետարան ըստ Յովհաննէսի., ու կը սկսի կ'աւարտի էջ 566 առանց յիւստի կարգին կ'աւարտի էջ 566՝ Բ. սիւնին երեք շատակարանի: էջ 566՝ Բ. սիւնին երեք շատակարանի է եւ էջ 567էն 572 նոյնչորրորդն պարսպ է եւ էջ 567էն 572 նոյնչորրորդն կարմրաւ եղած տողերը որոշ կերպով Մեարոյեան երկաթագիրներու ձեւը ունին գուցէ ձեռագիրս քիչ մը աւելի հին ըլլայ քան ինչ որ կ'ենթադրեմ, բայց չեմ կարծեր հանդամանէն դատելով, կրնայ ըլլալ նաեւ որ հին երկաթագիր օրինակէ մը արտադրուած ըլլայ:



